

## ԸՆԿԵՐ Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ընկերնե՛ր, հայրենակիցնե՛ր և հայրենակցուհինե՛ր:

Հասավ Գերմանիայի դեմ հաղթանակի մեծ օրը: Կարմիր Բանակի և մեր դաշնակիցների զորքերի կողմից ծունկի բերված ֆաշիստական Գերմանիան իրեն պարտված ճանաչեց և անվերապահ կապիտուլյացիա հայտարարեց:

Մայիսի 7-ին Ռեյմս քաղաքում ստորագրվեց կապիտուլյացիայի նախնական արձանագրությունը: Մայիսի 8-ին գերմանական գլխավոր հրամանատարության ներկայացուցիչները, դաշնակից զորքերի Գերագույն Հրամանատարության և սովետական զորքերի Գերագույն Գլխավոր Հրամանատարության ներկայացուցիչների ներկայությամբ Բեռլինում ստորագրեցին կապիտուլյացիայի վերջնական ակտը, որի կատարումն սկսվեց մայիսի 8-ի ժամը 24-ից:

Գիտենալով գերմանական պարագլուխների գայլային սովորությունը, որոնք պայմանագրերը և համաձայնագրերը համարում են դատարկ թուղթ, մենք հիմք չունենք հավատալու նրանց խոսքին: Սակայն այսօր առավոտվանից գերմանական զորքերը, ի կատարումն կապիտուլյացիայի ակտի, սկսեցին մասսայաբար զենքը ցած դնել և գերի հանձնվել մեր զորքերին: Դա արդեն դատարկ թուղթ չէ: Դա Գերմանիայի զինված ուժերի իսկական կապիտուլյացիա է: Ճիշտ է, գերմանական զորքերի մի խումբ Չեխոսլովակիայի շրջանում դեռևս խուսափում է կապիտուլյացիայից: Սակայն ես հույս ունեմ, որ Կարմիր Բանակին կհաջողվի խելքի բերել նրան:

Այժմ մենք կարող ենք լիովին հիմք ունենալով հայտարարել, որ հասել է Գերմանիայի վերջնական ջախջախման պատմական օրը, գերմանական իմպերիալիզմի դեմ մեր ժողովրդի տարած մեծ հաղթանակի օրը:

Մեր Հայրենիքի ազատության և անկախության համար մեր մեծ զոհաբերությունները, պատերազմի ընթացքում մեր ժողովրդի կրած անթիվ-անհամար զրկանքները ու տառապանքները, Հայրենիքի զոհասեղանին նվիրված լարված աշխատանքը թիկունքում և

ռազմաճակատում՝ ապարդյուն չանցան և պսակվեցին լիակատար հաղթանակով ընդդեմ թշնամու: Իրենց գոյության և իրենց անկախության համար սովետական ժողովուրդների մղած դարավոր պայքարը վերջացավ հաղթանակով ընդդեմ գերմանական զավթիչների և գերմանական բռնապետության:

Այժմվանից Եվրոպայի վրա կծածանվի ժողովուրդների ազատության և ժողովուրդների միջև խաղաղության մեծ դրոշը:

Երեք տարի առաջ Հիտլերը ի լուր ամենքի հայտարարեց, որ նրա խնդիրն է՝ անդամահատել Սովետական Միությունը և նրանից անջատել Կովկասը, Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթիկան և այլ մարզեր: Նա ուղղակի հայտարարեց՝ «Մենք կոչնչացնենք Ռուսաստանը, որ նա այլևս երբեք չկարողանա ոտքի կանգնել»: Դա երեք տարի առաջ էր: Սակայն Հիտլերի խելացնոր իդեաներին վիճակված չէր իրականանալ — պատերազմի ընթացքը հողմացրիվ արեց դրանք: Գործնականում ստացվեց ինչ-որ ուղղակի հակառակը այն բանի, ինչ զառանցում էին հիտլերականները: Գերմանիան գլխովին ջախջախված է: Գերմանական զորքերը կապիտուլյացիայի են ենթարկվում: Սովետական Միությունը տոնում է հաղթանակը, թեև նա չի էլ պատրաստվում ո՛չ անդամահատել, ո՛չ ոչնչացնել Գերմանիան:

Ընկերնե՛ր: Հայրենական Մեծ պատերազմն ավարտվեց մեր լիակատար հաղթանակով: Պատերազմի ժամանակաշրջանը Եվրոպայում վերջացավ: Սկսվեց խաղաղ զարգացման ժամանակաշրջանը:

Շնորհավորում եմ ձեզ հաղթանակի առթիվ, իմ թանկագին հայրենակիցնե՛ր և հայրենակցուհինե՛ր:

Փա՛ռք մեր հերոսական Կարմիր Բանակին, որ պաշտպանեց մեր Հայրենիքի անկախությունը և հաղթանակ նվաճեց թշնամու դեմ:

Փա՛ռք մեր մեծ ժողովրդին, հաղթող ժողովրդին:

Հավե՛րժ փառք թշնամու դեմ մղված մարտերում զոհված և իրենց կյանքը մեր ժողովրդի ազատության և երջանկության համար նվիրաբերած հերոսներին: